Գերամեծար գերյարգելի Աբբահօր մերոյ, և Բարունապետի Տեառն Տեառն Ստեփաննոսի Վրդ.ի՝ ողջոյն ի Քրիստոս ի տէր մեր

Թուղթ ՏԷ

... Այնչս անուն ծերացեալ մարապետն (որ զմարապետութիւնն առեալ էր ի ձեռաց լուսահոգի Մխիթարայ աբբահօր մերոյ) մեռաւ...։ Ի սեպտեմբերի 28 եղև եանղըն մեծ և զարհուրելի ի ստամպօլ, որոյ նմանն ի վաղուց չէր եղեալ. և տևեաց ժամս 35 և սկսաւ ի պախճայ խափուէն զայրացեալ սաստկութեամբ հիւսիսային հողմոյ հնչելոյ. և ընդ երկայն գնաց առ զառիվէր լերամբ և առ զառիվայրօքն մինչև մօտ ի յախըր խափուն. և ընդ լայն տարածեցաւ այսպէս, մի ծայրն սկսեալ ի պախճայ խափուէն այրեաց զտունս, որ առ պարսպօք թագաւորական պալատին մինչ ի յայա սօֆիա. և անտի մինչ ի յախըր խափուն. իսկ միւս ծայրն լայնութեան դիմեաց առ մահմուտ փաշայոմն այրելով և զնորաշէն տունս և զկրպակս հրէից ինն ամսով յառաջն ի հրդեհէ այրեցելոց և շինեցելոց. և առ չուխաճի խանաւն, և առ մահմուտ փաշայի ճամբոմն. և առ վէզիր խանաւն. և առ աթ մէյտանաւն իջանելով առ աւերակօք հրդեհին եղելոյ երկու ամսօք յառաջ ի խատիրլայ իլիմանն. և անտի մօտ ընդ փոքր այայ սօֆիայիւ մինչ մօտ ի ախըր խափուն։ Այսոքիկ ամենայն ասացեալ տեղիք այրեցան, այրեցաւ և փաշայ խափուսին, և այլ անբաւ պալատք մեծամեծաց և խօնախք ըըիճալլերուն. և անհամար տունք այլազգեաց, այրեցաւ և պաթան սարայներն. մահմուտ փաշային մէյքէմէն. մէնկէնէնոցն. հին ճէպխանէն. մէկ մինարէն սուլթան ահմէթին և այլ բազում ճամիներ։ Գրեթէ հինգերորդ մասն ստամպօլու այրեցաւ, և այն ըստ տեղւոյն. իսկ ըստ հարստութեան տանց և ըստ պատուականութեանն գրեթէ կէսն ստամպօլու, զի այրեցաւ ծուծ քաղաքին։ Ի քրիստոնէից տանց և ոչ մի այրեցաւ. միայն եղև նոցա վնաս ի խանն յայրեցմանէ փէքէներուն որ ի նմին։ Ութն օր յառաջ քան զայս մեծ եանղըն, եղև եանղըն ի խուզխունճուխն ի հրէայս. և այրեցան կէս տունքն եալըներուն, և ընդ ներքին կողմն գեղջն բազում տունք, և ընդ ամէնն աւելի քան զհարիւր տունս։...

Ցամին տեառն 1755 *Նուաստ ծառայ*

Հոկտեմբերի 16 *Հայր Զաքարիայ Վ.*

[Կ. Պոլիս]

ՃՁԱ.

Սրբուհի Եւփիմէ, որուն ոսկերաց հրաշքով փոխադրութեանը պատմութիւնը կը տրուի հոս, Քաղկեդոնէն էր՝ Դիոկղետիանոս կայսեր ժամանակ։

Գերապատիւ և ամենապայծառ տեառն ևն.

Ցայտ լիցի գերյարգութեան ձերում, զի մինչև ցայսօր արգիլեալ կամք ի ռովինիայ գրեթէ ի մայրաքաղաքն Իստրիայու...։ Միանգամ առ տարաւ զմեզ նաւապետն ի մայր եկեղեցին անուանեալ սրբոյն Եւփիմեայ, զորոյ և զմասունսն տեսաք եկեալ այսր հրաշիւք. քան զի յաւուր միում տեսեալ ի քարուտ եզերն սորա հազար ամ յառաջ զմեծ արկղ մի քարեղէն եկեալ ի վերայ ջուրց իբրեւ զնաւակ, փակեալ յամենայն կողմանց. և ազդ արարեալ մեծամեծաց, լծեալ են զբազմութիւն եզանց ի քարշել. բայց չէ լեալ հնար գէթ փոքր մի շարժել զնա։ Ի միում գիշերի մանուկ մի փոքրիկ միածին մօր իւրոյ տեսեալ է յանուրջս ասել նմա, թէ եթէ ձեր երկու եզինքն լծեսցին, կարէ այն տապան մեծ շարժիլ. և նա թլուատ լեզուաւն պատմեալ մօր իւրոյ, վաղվաղակի լծեալ են զեզինս. և իբր զմի ձու երկոքին եզինքն սկսեալ են արշաւելով տանիլ. մինչև չըրջեալ քարեղէն տապանակն ի վերայ մանկանն, որ առ նովաւ գնայր, ջախջախէ զնա, իսկ ցաւագին ծնօղն դիմեալ ի պարփակեալ սուրբն, իսկոյն նորաստեղծեալ է մանուկն;